ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4383-Ա « 12 » նոյեմբերի 2024 թ.

ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Գիմաս» ՍՊԸ-ի տնօրեն Արտուշ Պապոյանի դիմումը՝ Շիրակի փողոցի հ.1/5 հասցեում գտնվող շինությունների (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28112018-01-0268 վկայական) զբաղեցրած 2000.0քմ /600.0քմ+1400.0քմ/ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով ընկերությանն օտարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ կադաստրի կոմիտեի 17.09.2024թ. հ.Կ-17092024-01-0080 «Գույքի նկատմամբ իրավունքների /սահմանա-փակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» որոշումը, 06.06.2024թ. հ.4132-02 «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կադաստրի կոմիտեին ուղղված գրությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 03.07.2024թ. հ.ԴԳ 4185, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի 08.07.2024թ. հ.ՄՇ/26352, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 02.07.2024թ. հ.53/53.13/2740-2024 գրությունները:

Քննարկվող՝ 2000.0քմ /600.0քմ+1400.0քմ/ մակերեսով հողամասը (ծածկագիր՝ 01-011-0134-0100, 01-011-0134-0002) ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 8-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.43-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-118650-24 եզրակացությունը.

1.Շիրակի փողոցի հ.1/5 հասցեում գտնվող, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28112018-01-0268 վկայականի համաձայն «Գիմաս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած 2000.0քմ /600քմ+1400քմ/ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել

(վաճառել) ընկերությանը՝ տարածագնահատման 8-րդ գոտու շուկայական արժեքի մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 32.354.000 (երեսուներկու միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ընկերության հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4.Տեղեկացնել հողօգտագործողին, որ հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ